ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՄՆԱՑԱԿԱՆ ԹԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ Մնացական Թարյանի (Մխիթարյան) հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կոմիտասի պողոտա h.57 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄՆԱՑԱԿԱՆ ԹԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մնացական Վարդանի Թարյանը (Մխիթարյան) ծնվել է 1920 թվականի հունիսի 16-ին, Վաղարշապատ քաղաքում:

1940 թվականին ավարտել է Շոթա Ռուսթավելու անվան մանկավարժական ուսումնարանը:

1947-1978թթ. Մ. Թարյանը աշխատել է Հայաստանի կույրերի միավորման Երևանի հ.2 մշակույթի տանը, որպես՝ գեղարվեստական մասի վարիչ:

Մնացական Թարյանը հեղինակ է շուրջ երկու տասնյակ գրքերի, որոնք մնայուն գեղարվեստական արժեքներ են և թարգմանաբար լույս են տեսել տարբեր լեզուներով: Նրա բանաստեղծությունների հիման վրա գրվել են մի շարք երգեր:

Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ Մնացական Թարյանը գրել է նաև արձակ գործեր, որոնցից հատկանշանական է «Հայրենի տուն», «Բարդին», «Ինչու՞ ուշացավ», «Արևը», «Աշխարհում մի քիչ արև է» պատմվածքները:

Հաշվի առնելով Մնացական Թարյանի գրական մեծ վաստակը, նրա անուրանալի ծառայությունները, հատկապես՝ մանկագրության զարգացման գործում, ինչպես նաև այն, որ 2015 թվականին լրանում է վաստակաշատ բանաստեղծի ծննդյան 95-ամյակը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Մնացական Թարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագիծը:

Հայ անվանի բանաստեղծի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի հ.57 հասցեում (որտեղ 1960-1999թթ. ապրել և ստեղծագործել է բանաստեղծը) տեղադրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացրել է Հայաստանի գրողների միությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄՆԱՑԱԿԱՆ ԹԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մնացական Թարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄՆԱՑԱԿԱՆ ԹԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մնացական Թարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ